ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴԻՄԻՏՐՈՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դիմիտրով համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Դիմիտրով, (094)730000,(093)991354, dimitrov-gyuvapetaran@mail.ru,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 հունվարի 2017թվականի N 6

ԴԻՄԻՏՐՈՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 27-Ի ԹԻՎ 3 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Առաջնորդվելով << Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի ,6-րդ կետի պահանջներով, համայնքի ավագանին ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հաստատել Դիմիտրով համայնքի ավագանու 2017 թվականի հունվարի 27-ի թիվ 3 արտահերթ նիստի հետեյալ օրակարգը.

1. Դիմիտրով համայնքի ղեկավարի հաղորդումը 2016 թվականի չորրորդ եռամսյակի բյուջեի կատարման մասին:
2. Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դիմիտրով գյուղական համայնքի տարածքում 2017 թվականի տեղական տուրքերի և վճարների միասնական դրույքաչափերը սահմանելու և Դիմիտրով համայնքի ավագանու 2016 թվականի նոյեմբերի 24-ի թիվ 31-Ն և թիվ 32-Ն որոշումները ուժը կորցրած ճանաչելու մասին:

Կողմ -7 Դեմ -0 Չեռնպահ -0

1. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ՀԵՆՐԻԿ
2. ԻՎԱՆՈՎԱ ԱԻԴԱ
3. ԽԱՉԱՏՐՅԱՆ ՀԱՍՄԻԿ
4. ՂԱԶԱՐՅԱՆ ՍՈՒՍԱՆՆԱ
5. ՄԿՐՏՉՅԱՆ ԳԱՅԱՆԵ
6. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ՀԱՍՄԻԿ
7. ՍՈՒՄԲԱԹՅԱՆ ՆՎԱՐԴ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԱՆ ԻՈՆԱՆՈՎ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴԻՄԻՏՐՈՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դիմիտրով համայնք
22, Արարատի մարզ, գ.Դիմիտրով, (094)730000,(093)991354, dimitrov-gyuxapetaran@mail.ru,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 հունվարի 2017թվականի N 7

ԴԻՄԻՏՐՈՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՉՈՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Առաջնորդվելով << Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանարպետության օրենքի 35-րդ հոդվածով, համայնքի ղեկավարը նիստի մասնակիցներին ներկայացրեց 2016 թվականի չորրորդ եռամսյակի բյուջեի կատարողականը՝ եկամտային մասով 29735.4 հազար դրամ և ծախսային մասով 26753.6 հազար դրամ: Տրվեց բացատրություն կատարված ծախսերի վերաբերյալ: Ծանոթանալով ներկայացված հաշվետվությանը, համայնքի ավագանին ՈՐՈՇՈՒՄ Է՝

Ընդունել ի գիտություն Դիմիտրով համայնքի ղեկավարի հաղորդումը 2016 թվականի չորրորդ եռամսյակի բյուջեի կատարման մասին/հաշվետվությունը կցվում է/:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ՀԵՆՐԻԿ
2. ԻՎԱՆՈՎԱ ԱԻԴԱ
3. ԽԱՉԱՏՐՅԱՆ ՀԱՍՄԻԿ
4. ՂԱԶԱՐՅԱՆ ՍՈՒՍԱՆՆԱ
5. ՄԿՐՏՉՅԱՆ ԳԱՅԱՆԵ
6. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ՀԱՍՄԻԿ
7. ՍՈՒՄԲԱԹՅԱՆ ՆՎԱՐԴ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԱՆ ԻՈՆԱՆՈՎ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ
2016 ԹՎԱԿԱՆԻ ՉՈՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ
Եկամտային մաս

առ 30.12.2016 թ.

		տարեկ.պլան /հազ.դրամ/	մուտք	տարեկ. նկատմամբ %
	Հողի հարկ	3500.0	2850.4	81
	Գույքահարկ	3290.0	2960.5	90
	Հողի վարձավճար	179.0	213.5	119
	Տեղական տուրքեր և վճարներ	245.0	97.0	40
	Դոտացիա	21823.2	21823.2	100
	Ֆոնդային բյուջե	1790.8	1790.8	
	Ընդամենը	30828.0	29735.4	96.1

Ծախսային մաս

		Ըստ նախահաշվի	IV եռ.ծախս/հազ.դրամ/	ծախսը%
1	Կառավարման մարմին 01 01 01 51	15226.3	14184.1	93.2
	4111	12500.0	11851.6	94.8
	4212	650.0	622.9	95.8
	4213	115.0	106.8	92.9
	4214	170.0	132.0	77.6
	4215	35.0	25.0	71.4
	4221	10.0	10.0	100
	4232	115.0	100.8	87.7
	4233	50.0	46.6	93.2
	4234	67.0	29.0	88.1
	4239	-	-	-
	4241	50.0	0	0
	4252	60.0	60.0	100
	4261	360.0	308.1	85.6
	4264	250.0	250.0	100
	4823	10.0	9.3	93
	5129	120.0	120.	0
	5122	664.3	482.0	72.6
2	01 01 01 52	650.0	0	0
	5113	600.0	0	0
	5134	50.0	0	0
3	/մանկապարտեզ/ 09 01 01 51	8000.0	7401.0	92.5
	4239	8000.0	7401.0	92.5
4	09 08 01 55	50.0	0	0
	4261	50.0	0	0
5	Այլ նպաստներ 10 07 01 54	1580.0	1230.0	77.8
	4729	1580.0	1230.0	77.8
6	10 07 01 55	170.0	120.0	70.6
	4819	170.0	120.0	70.6

7	06 04 01 52	1300.0	1235.1	95
	4212	750.0	685.1	91.3
	4251	550.0	550.0	0
8	Պահուստային միջոցներ 11 01 02 51	407.5	0	0
	4891	407.5	0	0
7	08 02 01 51/Գրադարան/	878.0	971.4	90.1
	4111	878.0	971.4	90.1
8	08 02 04 51/ակումբ/	1029.0	935.5	90.9
	4111	899.0	825.5	91.8
	4239	30.0	10.0	33.3
	4269	100.0	100.0	100
9	01 03 03 55	100.0	100.0	100
	4239	100.0	100.0	100
10	07 06 02 55	100.0	100.0	100
	4639	100.0	100.0	100
11	Սանիտարական մաքրում 05 01 01 51	630.0	0	0
	4213	630.0	0	0
12	04 05 0 1 58	706.5	656.5	92.9
	5113	656.5	656.5	100
	5134	50.0	0	0

Աշխատակազմի քարտուղար՝ Թ.Արշակյան

Առաջատար մասնագետ՝ Հ. Թադևոսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴԻՄԻՏՐՈՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դիմիտրով համայնք
22, Արարատի մարզ, գ.Դիմիտրով, (094)730000,(093)991354, dimitrov-gyuxaperazan@mail.ru,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 հունվարի 2017թվականի N 8-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴԻՄԻՏՐՈՎ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ԴԻՄԻՏՐՈՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 24-Ի ԹԻՎ 31-Ն ԵՎ ԹԻՎ 32-Ն ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 18-րդ կետով, << Տեղական տուրքերի և վճարների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով, << Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածով, համայնքի ավագանին որոշում է՝

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դիմիտրով գյուղական համայնքի 2017 թվականի տեղական տուրքերի և վճարների միասնական դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:

2.Ուժը կորցրած ճանաչել Դիմիտրով համայնքի ավագանու 2016 թվականի նոյեմբերի 24-ի <<Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դիմիտրով գյուղական համայնքի տարածքում 2017 թվականի տեղական տուրքերի և վճարների միասնական դրույքաչափեր սահմանելու մասին>> թիվ 31-Ն և 2016 թվականի նոյեմբերի 24-ի << Մանկապարտեզ հաճախող մեկ երեխայի համար օրվա վարձավճար սահմանելու մասին>> թիվ 32-Ն որոշումները:

Կողմ -7 Դեմ -0 Չեռնպահ -0

1. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ՀԵՆՐԻԿ
2. ԻՎԱՆՈՎԱ ԱԻԴԱ
3. ԽԱՉԱՏՐՅԱՆ ՀԱՍՄԻԿ
4. ՂԱԶԱՐՅԱՆ ՍՈՒՍԱՆՆԱ
5. ՄԿՐՏՉՅԱՆ ԳԱՅԱՆԵ
6. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ՀԱՍՄԻԿ
7. ՍՈՒՄԲԱԹՅԱՆ ՆՎԱՐԴ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԱՆ ԻՈՆԱՆՈՎ

Հավելված
ՀՀ Արարատի մարզի Դիմիտրով համայնքի ավագանու
2017 թվականի հունվարի 27-ի թիվ 8-Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴԻՄԻՏՐՈՎ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1.Դիմիտրով համայնքում սահմանված տեղական տուրքերի տեսակները և դրույքաչափերը.

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) թույլտվության համար.

ա. հիմնական շենքերի և շինությունների համար՝

մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝ տասնհինգ հազար դրամ,

բ. սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 30000/երեսուն հազար/ դրամ,

- 500-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 50000/հիսուն հազար/ դրամ,

- 1000-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝50000/ հիսուն հազար/ դրամ,

- 3000-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 100000/հարյուր հազար/ դրամ.

գ. ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝

- մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 3000/երեք հազար/ դրամ,

- 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 5000/հինգ հազար/ դրամ.

2) համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, վերականգնման, ուժեղացման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա. չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝3000/ երեք հազար/ դրամ,

բ. բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի տրամաչափային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, և, բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափից, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և

դրույքաչափերը՝ շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով,

գ. նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը.

3) համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար՝ 5000/հինգ հազար/ դրամ.

4) համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 200000/ երկու հարյուր հազար/ դրամ.

5) համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում և կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի, մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 60000/վաթսուն հազար/ դրամ.

6) համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առք ու վաճառք իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 50000/հիսուն հազար/ դրամ.

7) համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝

ա. ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 5000/հինգ հազար / դրամ,

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 10100/տաս հազար մեկ հարյուր/ դրամ,

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 13100/տասներեք հազար մեկ հարյուր/ դրամ,

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝21000/ քսան մեկ հազար/ դրամ,

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 26000/քսանվեց հազար/ դրամ,

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 46000/քառասունվեց հազար/ դրամ.

բ. ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝5000/հինգ հազար / դրամ,

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 10100/տաս հազար մեկ հարյուր/ դրամ,

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 13100/տասներեք հազար մեկ հարյուր/ դրամ,

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 21000/ քսան մեկ հազար/ դրամ,

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 26000/քսանվեց հազար/ դրամ,

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 46000/քառասունվեց հազար/ դրամ.

8) իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար՝ յուրաքանչյուր օրվա համար՝ երեք հարյուր հիսուն դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար.

9) համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին) ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝

ա. առևտրի օբյեկտների համար՝ 50000/ հիսուն հազար/ դրամ,

բ. հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 50000/ հիսուն հազար/ դրամ,

գ. բաղնիքների (սաունաների) համար՝ 400000/չորս հարյուր հազար/ դրամ,

դ. խաղատների համար՝ 900000/ինը հարյուր հազար/դրամ,

ե. շահումով խաղերի համար՝ 250000/երկու հարյուր հիսուն հազար/ դրամ,

զ. վիճակախաղերի համար՝ 100000/ հարյուր հազար /դրամ.

10) համայնքի վարչական տարածքում, համայնքային կանոններին համապատասխան, հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

ա. հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 5000/ հինգ հազար / դրամ,

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 10000/ տասը հազար / դրամ,

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 15000/ տասնհինգ հազար / դրամ,

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 20000/ քսան հազար / դրամ,

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 30000/ երեսուն հազար/ դրամ,

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 50000/ հիսուն հազար/ դրամ.

բ. ոչ հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 1000/ հազար / դրամ,

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 2000/ երկու հազար / դրամ,

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 4000/չորս հազար/ դրամ,

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 8000/ութ հազար / դրամ,

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝15000/ տասնհինգ հազար/ դրամ,

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 25000 /քսանհինգ հազար/ դրամ.

11) ավազանու սահմանած կարգին ու պայմաններին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար, բացառությամբ միջպետական ու հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների օտարման շերտերում և պաշտպանական գոտիներում տեղադրվող գովազդների թույլտվությունների, յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար՝

ա. ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 2000/երկու հազար/ դրամ,

բ. թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 3500/ երեք հազար հինգ հարյուր/ դրամ,

գ. սոցիալական գովազդի համար՝ 0/զրո/ դրամ,

դ. այլ արտաքին գովազդի համար՝ 1500/հազար հինգ հարյուր/ դրամ,

ե. դատարկ գովազդային վահանակների համար՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 25 %-ի չափով,

զ. եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 10 %-ի չափով.

12) Համայնքի խորհրդանիշերը (զինանշան, անվանում և այլն), որպես օրենքով գրանցված ապրանքային նշան, ապրանքների արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գործընթացներում օգտագործելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 100000/ հարյուր հազար/ դրամ.

13) համայնքի վարչական տարածքում մարդատար-տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների՝ միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար՝ 10000/ տասը/ հազար դրամ.

2. Սույն հավելվածի 1-ին մասի 1-3-րդ կետերով սահմանված տեղական տուրքերի դրույքաչափերը հաշվարկել 0.5 գործակցի կիրառմամբ:

3. Սույն հավելվածի 1-ին մասի 4-13 –րդ կետերով սահմանված տեղական տուրքերի դրույքաչափերը հաշվարկվել 0.3 գործակցի կիրառմամբ.:

4. Համայնքում սահմանել տեղական վճարների հետևյալ տեսակները և դրույքաչափերը՝

1) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 7500 դրամ.

2) համայնքի տնօրինության և օգտագործման ներքո գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 5000 դրամ

3) համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 3000դրամ.

4) համայնքի կողմից աղբահանության վճար վճարողների համար աղբահանության աշխատանքները կազմակերպելու համար աղբահանության վճարը՝ առկա մեկ բնակչից ամիսը 50 դրամ.

5) համայնքային ենթակայության մանկապարտեզի ծառայությունից օգտվողների համար՝ մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումար՝ յուրաքանչյուր օրվա համար՝ 300/ երեք հարյուր/ դրամ

6) համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ տրամադրելու համար՝ մեկ փաստաթղթի համար՝ 500 դրամ փոխհատուցման վճար:

Աշխատակազմի քարտուղար Թ. Արշակյան